ԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՐԾ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ

Լեռնահանքային արդյունաբերության զարգացումն առանձնապես կարևորվում է մեր հանրապետության համար: ՀՀ տնտեսական հզորացման գործում անվիճելի է Սյունիքի մարզի լեռնահարստացուցիչ ձեռնարկությունների՝ ԶՊՄԿ-ի, ԱՊՄԿ-ի և ԿԼՀԿ-ի դերը: Այս ձեռնարկություններում տեխնոլոգիական բարդ գործընթացների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ են բարձր մասնագիտական գիտելիքներով օժտված կադրեր՝ լեռնագործներ և հանքահարստացնողներ:

Որակյալ մասնագետներ կրթելու գործընթացում անվիճելի է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դերը:«Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում» և «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտություններով սովորելու ընթացքում տեսական գիտելիքներն ամրապնդվում են լեռնային ձեռնարկություններում կազմակերպված պրակտիկաների, գործնական և լաբորատոր աշխատանքների կատարման շնորհիվ: Ընդունվեք և կհամոզվեք, որ Դուք եք մեր վաղվա լեռնային ձեռնարկությունների մասնագետներն ու ղեկավարները:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Եթե ցանկանում եք տիրապետել ամենաարդիական՝ մեր հանրապետությունում գերակա ուղղություն հայտարարված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագիտությանը, ունենալ բարձր վճարվող մշտական աշխատանք, ապա եկեք մեզ մոտ սովորելու:

Ստանալով ճարտարագիտության բակալավրի որակավորման աստիճան՝ Դուք կարող եք աշխատել տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում որպես՝ քոմփյութերային համակարգերի ու ցանցերի, տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված կառավարման համակարգերի (տեխնոլոգիական, ֆինանսաբանկային և այլն) շահագործող ճարտարագետներ ու ճարտարագետ-ծրագրավորողներ:

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

Մարդկային գործունեության ամեն մի բնագավառի մետաղային պահանջների բավարարման, ինչպես նաև արդի փուլում շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ օրըստօրե խստացող պայմանների ապահովման պատասխանատուն մետալուրգիական հեռանկարային տեխնոլոգիաներն են՝ մշակված ժամանակակից գիտական նվաճումների և արտադրական ձեռքբերումների հիման վրա:

Մասնագիտանալով այս ոլորտում՝ Դուք կարող եք ձեր գիտելիքները ներդնել մետալուրգիական արդյունաբերության ոլորտում, որը Հայաստանի, հատկապես Սյունիքի մարզի համար համարվում է տնտեսության գերակա ուղղություն և որին մեծ ապագա է սպասվում:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ Սյունիքի մարզի և ինչու չէ, նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական առանցքային ոլորտներից է լեռնամետալուրգիական արդյունաբերությունը, որը միշտ էլ որակյալ ճարտարագետ-տնտեսագետների կարիք է զգում:

Սովորելով այս մասնագիտությամբ՝ դուք կարող եք դառնալ.

- լեռնային և մետալուրգիական ձեռնարկությունների ճարտարագետ-տնտեսագետ,
- առևտրային կազմակերպությունների հաջողակ հիմնադիր ու բաժնետեր,
- հմուտ գործադիր տնօրեն ու մասնագետ,
- տնտեսական-արդյունաբերական ոլորտի հետ առնչվող պետական գերատեսչությունների (նախարարությունների, մարզպետարանների, հարկային, մաքսային, բանկային և այլ մարմինների) աշխատակից:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությունում մեծ թափ առած արդյունաբերական և քաղաքացիական շենքերի շինարարությունն ունի որակյալ շինարարների մեծ պահանջարկ:
2005թ.-ից ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում իրականացվում է ընդունելություն «Շինարարություն» մասնագիտությամբ, որի շրջանավարտները հաջողությամբ աշխատում են Սյունիքի մարզի տարբեր շինարարական կազմակերպություններում և նրանց մասին բավական լավ արձագանքներ կան:

Սիրելի դիմորդ, առանց երկմտանքի ընտրեք շինարարի մասնագիտությունը և դարձեք հայտնի հայ ճարտարապետների, շինարարների շարունակողը և նպաստեք շինարարության զարգացմանը:

Սիրով սպասում ենք Ձեզ

Սյունիքի մարզ, ք.Կապան, Բաղաբերդի 28
Հեռ: (0285)5-46-80
Ֆաքս: (0285)5-46-80
www.polytech.am
www.haphkapan.com
www.facebook.com/Kapan.HAPH/
E-mail: baghaberd@seua.am
info@haphkapan.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայաստանի Հանրապետության՝ բարձրագույն տեխնոլոգիական կրթության անվիճարկելի առաջատար Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը Կապանում ՈՒԽԿ-ի հիմքի վրա 1996/97 ուստարում հիմնադրեց Կապանի մասնաճյուղը: Այն ներառում է երկու ֆակուլտետ, որոնց կազմում ընդգրկված է վեց ամբիոն: Գործում են հեռահար ուսուցման լսարանները, ֆիզիկայի, քիմիայի, նյութագիտության և մետալուրգիայի, ընդերքաբանության ու շինարարության և համակարգչային լաբորատորիաները, որոնք հագեցված են անհրաժեշտ ուսումնալաբորատոր սարքավորումներով: Մասնաճյուղն ունի ընդարձակ մարզադահլիճ, որտեղ ֆիզիկական կուլտուրայի դասեր և սեկցիոն պարապմունքներ են անցկացնում ուսանողները:

Մասնաճյուղում դասավանդում է 3 գիտության դոկտոր, պրոֆեսոր, 9 գիտության թեկնածու, դոցենտ, 4 գիտության թեկնածու, ասիստենտ, 2 ասիստենտ և 32 դասախոս: Մասնաճյուղն այսօր ունի 450 ուսանող: ՈՒսանողությունն ունի իր ինքնակառավարման մարմինը՝ ուսանողական խորհուրդը, որը կազմակերպում և բովանդակալից է դարձնում ուսանողական կյանքը:

Մասնաճյուղն առ այսօր տվել է շուրջ 1494 շրջանավարտ, որոնց գերակշիռ մասն աշխատում է մարզի և հանրապետության ձեռնարկություններում, ոմանք զբաղեցնում են ղեկավար և պատասխանատու պաշտոններ:

Սյունիքի մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ճարտարագիտական կադրերով ապահովելու նպատակով՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը հաջողությամբ իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գերակա համարվող երկու հիմնական ուղղության՝ լեռնամետալուրգիական և ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների մասնագիտության գծով ճարտարագիտության բակալավրի կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում: Բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումը շարունակել ՀԱՊՀ մագիստրատուրայում և ասպիրանտուրայում:

Մասնաճյուղում գործում է ուսման վարձերի զեղչերի ճկուն համակարգ, բարձր առաջադիմություն ցուցաբերելու դեպքում ուսանողները օգտվում են շրջափոխման իրավունքից (վճարովի համակարգից անվճար և հակառակը): 2017թ-ից ուսանողները օգտվում են նաև Ռոբերտ Էջանանցու անվան կրթաթոշակից: Ուսանողներին ֆինանսական աջակցություն են ցուցաբերում ՎիվաՍել-ՄՏՍ Կրթական ֆոնդը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Լոս-Անջելեսի շրջանավարտների և բարեկամների միությունը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամը:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը հայտարարում է 2017 -2018 ուստարվա ընդունելություն հետևյալ մասնագիտություններով

Մասնագիտությունը, *կրթական ծրագիրը*	Ընդունելության քննությունները			Ընդունելության տեղերը			Ուսման վարձ	
				առկա		հեռակա***	առկա	հեռակա***
	մրցութային		ոչ մրցութային	անվճար (այդ թվում ԲՀ)	վճարովի	վճարովի		
Տնտեսագիտություն	Մ(գ)	Ֆ(գ)**	Հլգ(գ)*	3	22	20	450000	360000
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ (գ)	Ֆ(գ)**	Հլգ(գ)*	4	21	15	450000	360000
Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլգ(գ)*	4(1)	16	15	390000	312000
Մետալուրգիա	Մ(գ) կամ Ֆ (գ)	Ֆ (գ) ** կամ Մ(գ)**	Հլգ(գ)*	3	12	10	390000	312000
Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ (գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլգ(գ)*	-	-	10	-	312000
Օգտակար հանածոների հարստացում	Մ(գ) կամ Ֆ (գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**	Հլգ(գ)*	-	-	10	-	312000

(գ) - գրավոր; Հլգ - Հայոց լեզու և գրականություն; Մ- Մաթեմատիկա; Ֆ-Ֆիզիկա

* Նշված ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դիմորդներն անվճար (բացառությամբ «Տնտեսագիտություն» մասնագիտության) ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

***Հնարավոր են փոփոխություններ հեռակա ուսուցման վճարովի տեղերի և վարձավճարների հետ կապված:

2017/18 ուստարում ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը նախատեսում է կատարել նաև միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելություն «Օգտակար հանածոների հարստացում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտություններով: Յուրաքանչյուր մասնագիտության համար՝ ***15 անվճար տեղեր***: